ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2014թ. թիվ 39-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի ԹԻՎ 162-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 7, 15 և 17 կետերը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Ծաղկաշատի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի անդամ Վարդիթեր Վարոսյանի 03.02.2014թ. դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2010թ. հուլիսի 27-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 162-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.

«ՀՀ Լոռու մարզի Ծաղկաշատի հիմնական դպրոց» ՊՈԱԿ» մասում «Վարոսյան Վարդիթեր» բառերը փոխարինել «Մելիքսեթյան կարինե» բառերով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. փետրվարի 12
ք.Վանաձոր